ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ *bagrat.vardanyan@ysu.am*

DOI: 10.24234/scientific.v3i50.244

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը վերաբերվում է Ռուսաստանի Դաշնությունում կենսանվտանգության իրավական և քաղաքական կառուցակարգերի համակարգային ուսումնասիրությանը՝ ընդգծելով ոլորտի օրենսդրական հիմքերը, միջազգային համագործակցության շրջանակները, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող կենսալաբորատորիաների շուրջ ձևավորված քաղաքական–անվտանգային քննարկումներն ու դրանց անդրադարձը Հայաստանի կենսանվտանգային միջավայրի վրա: COVID-19 համավարակից հետո կենսաբանական սպառնալիքների և դրանց կանխարգելման անհրաժեշտության մասին ակադեմիական քննարկումները նոր թափ են ստացել, ինչն էլ ձևավորել է աշխատանքի արդիականությունն ու գիտական նշանակությունը: Հոդվածի նպատակը կենսանվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնության իրավաքաղաքական խնդիրների բացահայտումն ու ՀՀ կենսանվտանգության միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատումն է: Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել համակողմանի ուսումնասիրության ենթարկել Ռուսաստանի Դաշնությունում կենսանվտանգության ոլորտը կարգավորող նորմատիվ–իրավական բազան, ինչպես նաև գնահատել Ռուսաստանի Դաշնության միջազգային և տարածաշրջանային համագործակցության

ռազմավարական ուղղությունները և քաղաքական մարտահրավերները կենսանվտանգության ապահովման ոլորտում: Հոդվածում քննարկվող խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների վերլուծության հիման վրա: Կիրառվել են համակարգային վերլուծության, համադրման, ինդուկցիայի, դեդուկցիայի մեթոդները: Հոդվածում հիմնավորվում է, որ Ռուսաստանի Դաշնությունում կենսանվտանգության ապահովման ոլորտի օրենսդրական և կառավարչական համակարգը ներկայումս բավարար մակարդակի վրա չէ և չի ապահովում ոլորտի համալիր կարգավորումը: Միաժամանակ հիմնավորվել է նաև, որ կենսանվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կայուն և արդյունավետ քաղաքականության երաշխիքը թափանցիկ և բազմավեկտոր համագործակցությունն է:

Բանալի բառեր: *կենսանվտանգություն, ազգային անվտանգություն, միջազգային համագործակցություն, կենսաբանական զենքի կոնվենցիա, կենսալաբորատորիա:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կենսանվտանգությունը հանդիսանում է ոչ միայն առանձին պետությունների, այլև ամբողջ համաշխարհային հանրության անվտանգության համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այսօր արդեն ակնհայտ է, որ կենսաանվտանգության հետ կապված խնդիրները արդիական են առավել քան երբևէ և պահանջում են միջազգային հանրության առավելագույն ուշադրությունը: Վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը, որպես կանոն առաջացնում են ոչ միայն առողջապահական, այլև քաղաքական, սոցիալական ու տնտեսական բնույթի մի շարք խնդիրներ: Այդ ամենի վառ ապացույցը COVID-19 համավարակն էր, որը էականորեն ազդեց կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ առողջությունից մինչև տնտեսություն, աշխատանքի կազմակերպում, հաղորդակցություն և միջազգային կապեր: Բացի այդ, տեխնոլոգիական առաջընթացը՝ գենոմի խմբագրման, սինթետիկ կենսաբանության և մոլեկուլային ինժեներիայի ոլորտներում, հսկայական գիտական հնարավորություններից զատ, ստեղծում է նաև նոր մարտահրավերներ, որոնց վերահսկումը պահանջում է գլոբալ համագործակցություն և պատասխանատվություն

(Rinaldi, 2024, p.455-456)։ Այս համատեքստում առավել կանոր է դառնում կենսանվտանգության ապահովման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը՝ իրավական, կառավարչական և քաղաքական ասպեկտներով, ինչը հնարավորություն կտա առավել փաստարկված կերպով հասկանալ երկրների պատրաստվածության մակարդակը՝ կենսաբանական սպառնալիքներին հակազդման գործընթացում։ Քանի որ կենսանվտանգության ապահովման մակարդակից է նաև կախված հասարակական հարաբերությունների կայունությունը տարբեր ոլորտներում, ուստի դրա իրավական և քաղաքական կարգավորումը պետք է դիտվի որպես պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը (Albert, C., Baez, A., & Rutland, J. 2021, p.83-105)։ Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնությունը կենսանվտանգության ապահովման համակարգը դիտարկում է որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս, որը փոխկապակցված է անվտանգության այլ տեսակների։ Ասվածի վկայությունն է այն, որ Ռուսաստանը ՀՀ-ում գործող և ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող կենսալաբորատորիաները համարում է ազգային անվտանգության սպառնալիք։ Վերջին տարիներին, հատկապես COVID-19 համավարակից հետո, Ռուսաստանը վճռական քայլեր է ձեռնարկել կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրությունը լավարկելու, ինչպես նաև միջազգային համագործակցությունը խթանելու ուղղությամբ (Заврие в, С.К. 2022, p. 94-100)։ Սակայն կենսանվտանգության համակարգի համալիր կարգավորման հասնելու տեսանկյունից դեռևս առկա են մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնց լուծումը թաքնված է ոլորտի առանձնահատկությունների ճշգրիտ ընկալման և գիտահեն մոտեցումների մեջ։

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է քաղաքագիտությանը և այլ գիտակարգերին հատուկ մեթոդաբանությամբ, կիրառվել են համեմատական վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդական գործիքները, որոնք հնարավորություն են տալիս լավագույնս բացահայտելու Ռուսաստանի Դաշնության կենսանվտանգության համակարգի իրավաքաղաքական հիմնախնդիրները, նախանշել հնարավոր լուծումների հեռանկարները, ինչպես նաև գնահատել դրանց ազդեցությունը

Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման միջավայրի վրա: Սա ենթադրում է ոլորտը կարգավորող իրավական և քաղաքական փաստաթղթերի, ինչպես նաև ոլորտի առաջատար հետազոտողների աշխատությունների ուսումնասիրություն և բովանդակային վերլուծություն: Հոդվածը հղումներ է կատարվում տարբեր գիտնականների աշխատություններին՝ ապահովելով գիտական հիմնավորվածություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՌԴ կենսանվտանգության ոլորտը կարգավորող իրավական դաշտը

Ինչպես արդեն նշեցինք Ռուսաստանի Դաշնության կենսանվտանգության ապահովման համակարգը դիտարկվում է որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: «Ազգային անվտանգություն» հասկացության սահմանումը տրված է Ռուսաստանի Դաշնության նախագահի 2021 թ. հուլիսի 2-ի № 400 հրամանով հաստատված Ազգային անվտանգության ռազմավարությունում: Այն սահմանվում է որպես՝ «Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի պաշտպանվածության վիճակ՝ արտաքին և ներքին սպառնալիքներից, որի պայմաններում ապահովվում են քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը, կյանքի որակն ու մակարդակը, քաղաքացիական համերաշխությունը, Ռուսաստանի Դաշնության ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության պահպանումը, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը» (Указ Президента РФ No 400, 2021): ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության մեջ, ռազմավարական առաջնահերթությունների շարքում ընդգրկված են պետական և հասարակական անվտանգությունը, ինչպես նաև տեղեկատվական, տնտեսական և էկոլոգիական անվտանգությունը: Համապատասխան բաժիններում սահմանված են դրանց ապահովման նպատակներն ու խնդիրները, սակայն կենսանվտանգությունը, որպես անվտանգության առանձին ոլորտ չի ներառվել ռազմավարության մեջ:

Միևնույն ժամանակ, ազգային անվտանգության ռազմավարության մեջ կենսաբանական ռիսկերի մոնիթորինգի համակարգի զարգացումը դիտարկվում է որպես **պետական քաղաքականության խնդիր**՝ ուղղված ժողովրդագրական ներուժի

պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև **էկոլոգիական անվտանգության ապահովմանը**: Բացի այդ, ռազմավարության մեջ պետական և հասարակական անվտանգության սպառնալիքների թվում նշվում է նաև **կենսաբանական ահաբեկչության գործողությունների կանխարգելումը և չեզոքացումը**: Ըստ էության, կարող ենք փաստել, որ թեև կենսանվտանգությունը, որպես անվտանգության առանձին ոլորտ ներառված չէ ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության մեջ և կարելի է ասել դիտարկվում է անվտանգության այլ ճյուղերի՝ հատկապես էկոլոգիական անվտանգության համատեքստում, սակայն ռազմավարության բովանդակությունը ըստ էության ընդգծում է դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը: Կենսանվտանգության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման պահանջը արտահայտվեց նաև 2020 թվականին ՌԴ սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով: Ըստ պրոֆեսոր Ս.Ա. Ավակյանի՝ Սահմանադրության փոփոխությունների ընդունումը 2020 թվականին դարձավ նոր փուլ առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքի սահմանադրական հիմքերի ամրապնդման գործում: Այս իրավունքի բարձր երաշխիքները հանդիսանում են կենսանվտանգության ապահովման կարևորագույն պայման (Авакьян С.А. 2021, p.774):

Ա.Վ. Ֆեոկտիստովն ու Ե.Ն. Սկվորցովան որպես դրական նորույթ ընդգծում են «առողջ ապրելակերպի» հասկացության ամրագրումը Սահմանադրության մեջ: Հանրային առողջության զարգացումը՝ առողջ կենսակերպի տարածման միջոցով, կնպաստի հասարակության ընդհանուր իմունային մակարդակի և նոր վարակների տարածման նկատմամբ դիմադրողականության բարձրացմանը (Феоктистов, А. В., & Скворцова, Е. Н, 2020, p.103): Սակայն հիմնական ռազմավարական փաստաթուղթը, որով սահմանվում են ՌԴ պետական քաղաքականության հիմքերը կենսանվտանգության ապահովման ոլորտում, հանդիսանում է 2019 թ. մարտի 11-ի «Քիմիական և կենսաբանական անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմունքները մինչև 2025 թ. և հետագա հեռանկարը» սահմանելու մասին ՌԴ նախագահի № 97 (փոփոխությունը՝ 24 հունվարի 2025թ) հրամանագիրը: Այս փաստաթուղթը առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ

կենսանվտանգության ապահովումը սահմանում է որպես ազգային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը։

Սույն փաստաթղթով նախանշվում են հետևյալ հիմնական սպառնալիքները.

- նոր կամ նախկինում անհայտ վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը, ինչպես նաև նախկինում հայտնի վարակիչ հիվանդությունների վերադարձը,
- գենային ինժեներիայի և սինթետիկ կենսաբանության անվերահսկելի կիրառումները,
- կենդանիների և բույսերի վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը, որոնք վնասում են էկոհամակարգին,
- մարդու, կենդանիների և բույսերի գենոտիպի և ֆենոտիպի փոփոխությունները արտաքին միջավայրի ազդեցությամբ,
- հակաբիոտիկների նկատմամբ կայունության աճը,
- կենսաբանորեն վտանգավոր նյութերի հետ աշխատանք իրականացնող օբյեկտներում հավանական վթարները կամ դիվերսիաները,
- վտանգավոր կենսաբանական նյութերի և/կամ կենսատեխնոլոգիաների օգտագործմամբ ահաբեկչական գործողությունների իրականացումը։

Փաստաթղթով սահմանվում են նաև կենսանվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, այն է՝

- կենսաբանական ռիսկերի մշտադիտարկման համակարգի զարգացումը,
- նորմատիվ-իրավական բազայի և պետական կառավարման համակարգի արդիականացումը,
- կենսանվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների բարելավումը,
- կենսաբանական սպառնալիքների չեզոքացմանը, ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանը, բնակչության և կենտրոնի պաշտպանությանն ուղղված արդյունավետ միջոցառումների իրականացումը (Указ Президента РФ No 97, 2019)։

ՌԴ կենսանվտանգության ապահովման համակարգի նորմատիվ կարգավորման տեսանկյունից վճռական քայլ էր 2020 թ. դեկտեմբերի 30-ի «Ռուսաստանի Դաշնությունում կենսաբանական անվտանգության մասին» № 492-ՖՁ դաշնային օրենքի ընդունումը (փոփոխությունը՝ 23 հուլիսի 2025թ)։ Այս օրենքը դարձավ առաջին ամբողջական նորմատիվ ակտը, որն ամրագրեց «կենսանվտանգություն» հասկացության իրավական ձևակերպումը։ Մինչև դրա ընդունումը ռուսական օրենսդրության մեջ նման տերմինաբանություն գործնականում բացակայում էր։ Բացի այդ, սույն օրենքով կենսանվտանգությունը առանձնացվեց քիմիական անվտանգությունից՝ դիտարկելով որպես առանձին ոլորտ։

Սույն օրենքում կենսանվտանգությունը բնութագրվում է որպես բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանվածության վիճակ վտանգավոր կենսաբանական գործոնների ազդեցությունից՝ կենսաբանական ռիսկի ընդունելի մակարդակի պահպանմամբ։ Օրենքով ամրագրվեցին նաև համալիր միջոցառումներ՝ ուղղված բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը վտանգավոր կենսաբանական գործոններից, կենսաբանական սպառնալիքների կանխարգելմանը և կենսաբանական ռիսկերի մոնիթորինգի համակարգի ստեղծմանը։

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են Ռուսաստանի Դաշնության հիմնական կենսաբանական սպառնալիքները, որոնց թվում ի տարբերություն նախորդ ռազմավարական փաստաթղթի տեղ է գտել նաև մարդկանց և կենդանիների մոտ իմունային անբավարարության հետ կապված վարակիչ հիվանդությունների տարածումը։ Հատկանշական է, որ սույն օրենքով նախատեսվում է ստեղծել պետական տեղեկատվական համակարգ՝ կենսաբանական ռիսկերը կառավարելու և կենսանվտանգության ոլորտում դաշնային պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկատվության փոխանակումն ապահովելու նպատակով։ Օրենքով սահմանվում է նաև կենսանվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնության միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ «կենսաբանական և տոքսինային զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրանց ոչնչացման մասին» կոնվենցիայի, կենսանվտանգության ապահովման միջազգային և միջպետական համակարգերին Ռուսաստանի

Դաշնության ինտեգրման, ռուս փորձագետների և մասնագիտացված կազմակերպությունների միջոցով միջազգային կազմակերպություններում և կառույցներում Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչության ապահովման, ինչպես նաև կենսաահաբեկչական գործողությունների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման շրջանակներում (Федеральный закон РФ No 492-ФЗ, 2020)։

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի Դաշնության կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող իրավական բազան վերջին տարիներին (հատկապես COVID-19-ից հետո) բավականին ընդլայնվել է, այնուամենայնիվ իրավական առումով ոլորտի համալիր կարգավորմանը հասնելու համար դեռևս առկա են մի շարք խնդիրներ։ Մասնավորապես ոլորտը կարգավորող փաստաթղթերում բացակայում է կենսաբանական սպառնալիքների ծագման պատճառը բացահայտելու մեխանիզմները, այսինքն դրանց բնական կամ արհեստական ճանապարհով առաջանալու հանգամանքի պարզաբանումը։ Այս բացը բավականին լուրջ վտանգ է ներկայացնում պետության անվտանգության համար, քանի որ կենսաբանական սպառնալիքների ծագման բնույթից կախված պետությունը պետք է ունենա հստակ արձագանքման ալգորիթմ և գործողությունների համակարգ։

Ըստ էության, կենսանվտանգության ապահովման ոլորտում ՌԴ օրենսդրական համակարգի գլխավոր խնդիրը պայմանավորված է իրավական փաստաթղթերի շրջանակային բնույթով։ Այսինքն, այդ փաստաթղթերով սահմանվում են միայն ընդհանուր սկզբունքներ և կանոններ, մինչդեռ ոլորտի մանրամասն կարգավորումը թողնվում է ենթաօրենսդրական ակտերին (օրինակ՝ կառավարության որոշումներին, նախարարությունների հրամաններին, կանոնակարգերին և այլն)։ Արդյունքում բազմաթիվ հարցեր մնում են անորոշ կամ չկարգավորված, ինչը հանգեցնում է դրանց գործնական կիրառման խնդիրների և իրավահարաբերությունների սխալ մեկնաբանման։ Կենսանվտանգության ապահովման ոլորտում հատկապես նման մոտեցումը լուրջ բարդություններ է ստեղծում, քանի որ կենսաբանական սպառնալիքների առաջացման և զարգացման արագությունը շատ ավելի բարձր է, քան իրավական բազայի փոփոխման և հարմարվելու տեմպը։ Ըստ այդմ, անհրաժեշտ է, որ ոլորտը կարգավորող օրենքները միտված լինեն կենսաբանական սպառնալիքների կանխմանը՝ ապահովելով գիտության և իրավունքի սերտ համագործակցություն։

Այսպիսով, Ռազմավարական պլանավորման փաստաթղթերը, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, պետք է ունենան ոչ թե նկարագրական, այլ գործնական բնույթ։ Դրանք պետք է պարունակեն հստակ խնդիրներ, որոնց լուծումը հանգեցնում է առաջադրված նպատակների իրականացմանը և ապահովում է պետական կառավարման բոլոր օղակների ներդաշնակ աշխատանքը։ Կենսանվտանգության հասկացության ըմբռնման և ընդգրկման շրջանակի վերաբերյալ նույնպես կան որոշակի վերապահումներ։ Ըստ էության, ՌԴ իրավաքաղաքական փաստաթղթերում և գիտավերլուծական աշխատանքներում կենսանվտանգությունը ներկայացվում է կամ որպես էկոլոգիական անվտանգության ենթատեսակ, կամ զուգորդվում է քիմիական անվտանգության հետ, ինչը կարծում ենք հնարավորություն չի տալիս ճշգրիտ և արդյունավետ կերպով հասկանալ և գնահատել կենսաբանական սպառնալիքների առանձնահատկությունները և էապես նվազեցնում է դրանց կանխարգելման արդյունավետությունը։ Ինչ վերաբերվում է կենսանվտանգության համակարգի ընդգրկման շրջանակին, ապա պետք է փաստել, որ այստեղից դուրս է մնում շատ կարևոր մի ոլորտ կամ ենթաճյուղ՝ կենսաէթիկան, որի մասին հիշատակում չկա անգամ «Ռուսաստանի Դաշնությունում կենսաբանական անվտանգության մասին» դաշնային օրենքում, ինչը առնվազն խնդրահարույց է, հաշվի առնելով գիտատեխնիկական ժամանակակից տենդենցները և դրանցից բխող էթիկական հիմնահարցերը։

ՌԴ կենսանվտանգության ապահովման ոլորտի քաղաքական մարտահրավերները

Ռուսաստանի ակտիվ ներգրավվածությունը կենսաբանական սպառնալիքների կանխարգելման միջազգային համակարգում շարունակում է մնալ լայնածավալ քննարկման առարկա։ Հարկ է նշել, որ Ռուսաստանը չունի սեփական կենսանվտանգության ասոցիացիա և, հետևաբար, չի հանդիսանում Կենսանվտանգության ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (IFBA) անդամ։ Ռուսաստանը դեռևս լիարժեք պատրաստ չլինելով անդամակցել արդեն գործող միջազգային կառույցներին, նպատակահարմար է համարում կենսաանվտանգության ոլորտում համագործակցության մեխանիզմներ ձևավորել **Շանհայի**

համագործակցության կազմակերպության (ՇՀԿ), **ԱՊՀ-ի**, **ԲՐԻԿՍ-ի և ՀԱՊԿ-ի** շրջանակներում (Редникова, Т. В. 2023, p. 1–10)։

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է կենսանվտանգության ապահովման վերաբերյալ համաձայնագրեր կնքելու իր ծրագրերի մասին ՀԱՊԿ և ԱՊՀ անդամ բոլոր պետությունների հետ։ Ռուսաստանը հանդես է գալիս նախաձեռնությամբ՝ որքան հնարավոր է շուտ գործարկել ՀԱՊԿ ձևաչափով **կենսաանվտանգության ոլորտում համագործակցության մեխանիզմը**։ Այս նախաձեռնության էությունը կայանում է ՀԱՊԿ անդամ պետությունների **կենսաանվտանգության հարցերով լիազորված մարմինների համակարգող խորհրդի ստեղծման մեջ**։ Կենսանվտանգության ապահովման ոլորտում ՀԱՊԿ անդամ պետությունների միջև փոխգործակցության մեխանիզմի ստեղծումը իրականացվել է մի քանի փուլով և պահանջել է գործող իրավական բազայի ընդլայնում։ Այսպես, 2020 թվականի վերջին, կենսանվտանգության ապահովման ոլորտում համագործակցության իրավական և կառավարչական շրջանակը կատարելագործելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Ռուսաստանի Դաշնությունը առաջարկեց ստեղծել ՀԱՊԿ անդամ պետությունների կենսանվտանգության հարցերով լիազոր մարմինների համակարգող խորհուրդ, որը հաշվետու կլինի ՀԱՊԿ Անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեին։ 2021թ.-ին լրացվեց ՀԱՊԿ կանոնադրության 8-րդ հոդվածը և անդամ պետությունների փոխգործակցության ուղղությունների մեջ ներառվեց նաև կենսանվտանգության ոլորտը։ Բացի այդ, ՀԱՊԿ Անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեն ստացավ կազմակերպության կառույցների և անդամ պետությունների պետական մարմինների կենսանվտանգության ոլորտի գործունեությունը համակարգելու լիազորություն (Голуб, К. Ю. 2024, p. 9–15)։ Հետագայում հաստատվեցին համակարգող խորհրդի իրավական կարգավիճակը, անդամ պետությունների ներկայացուցիչների կազմը և աշխատանքային կանոնակարգերը։ Այսպես, համակարգող խորհրդի կազմում ներառվել են ոչ միայն անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ հակահամաճարակային պահանջների պահպանումն ապահովելու համար լիազորված համապատասխան կազմակերպություններն ու գործակալությունները, այլև այնպիսի գերատեսչություններ, որոնք առնչվում են կենսանվտանգության

ոլորտին ավելի լայն իմաստով, մասնավորապես՝ անդամ պետությունների պաշտպանության նախարարությունները, արտաքին գործերի նախարարությունները, անվտանգության խորհուրդների գրասենյակները և մի շարք այլ կառույցներ: Ըստ էության, Համակարգող խորհուրդը խորհրդատվական մարմին է և չունի գործնական լիազորություններ: Այն կարող է առաջարկություններ ներկայացնել ՀԱՊԿ-ի շրջանակներում կենսանվտանգության ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերի և որոշումների գործնական իրականացման վերաբերյալ, ինչպես նաև նպաստել ՀԱՊԿ անդամ պետությունների կողմից կենսաբանական սպառնալիքները կանխելու նպատակով համատեղ միջոցառումների իրականացմանը: Կենսանվտանգության ապահովման ոլորտում միջազգային համագործակցության կարևոր քայլերից էր 2021 թ. հունիսի 24-ին Սոչիում կայացած միջազգային գիտաժողովը՝ «Կենսաանվտանգության գլոբալ սպառնալիքներ. խնդիրներ և լուծումներ» խորագրով, որտեղ արձանագրվեց, որ Ռուսաստանը պատրաստ է իր կառուցողական ներդրումն ունենալ ինչպես բազմակողմ (ՀԱՊԿ, ԱՊՀ, ՇՀԿ, ԲՐԻԿՍ), այնպես էլ երկկողմ ձևաչափերում: Նույն գիտաժողովում ընդգծվեց նաև, որ աճում է **կենսաբանական զենքի կիրառման և դրա քողարկման վտանգը**՝ այն ներկայացնելով որպես բնական ծագմամբ վարակիչ հիվանդությունների բռնկում ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների և բույսերի շրջանում: Ռուսաստանի Դաշնության միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները կենսանվտանգության ոլորտում սահմանվում են «Ռուսաստանի Դաշնությունում կենսաբանական անվտանգության մասին» Դաշնային օրենքի 15-րդ հոդվածով: Որպես միջազգային համագործակցության առաջնահերթ ուղղություն նախանշվել է «կենսաբանական և տոքսինային զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրանց ոչնչացման մասին» կոնվենցիան, որն առավել հայտնի է Կենսաբանական զենքի կոնվենցիա անվանումով (ԿԶԿ): Այս կոնվենցիան հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության հիմնական միջազգային պարտավորությունը կենսանվտանգության ապահովման ոլորտում: Կոնվենցիան ստորագրվել է 1972 թ. ապրիլի 10-ին և ուժի մեջ է մտել 1975 թ. մարտի 26-ին: Այս փաստաթուղթը միջազգային իրավունքի հիմքերից մեկն է կենսաբանական սպառնալիքների կանխարգելման ոլորտում: Ներկայումս դրան միացել են 184

պետություններ։ Այնուամենայնիվ, կոնվենցիան դեռևս չունի համընդհանուր բնույթ, մի շարք երկրներ չեն ստորագրել կամ չեն վավերացրել այն։ Զանգվածային ոչնչացման զենքերի տարածման արգելքի իրավական ռեժիմը սահմանող երեք հիմնական միջազգային համաձայնագրերի շարքում ԿԶԿ-ն երրորդ տեղում է մասնակիցների թվով, առաջին տեղում է քիմիական զենքի արգելման կոնվենցիան՝ 193 պետություն, երկրորդում՝ միջուկային զենքի արգելման կոնվենցիան՝ 192 պետություն (Захаров, Т. В. 2024, p. 26-36)։ Հարկ է նշել, որ չնայած կոնվենցիան ընդգրկում է կենսաբանական զենքերի արտադրության, ներառյալ՝ սինթետիկ կենսաբանության և գենոմի խմբագրման տեխնոլոգիաները, այնուամենայնիվ դրանց վերահսկողության մեխանիզմները դեռևս հստակ սահմանված չեն։ Ակնհայտ է, որ կենսաբանական զենքի վերաբերյալ հարցերը քննելիս առաջին պլան են գալիս անձնակազմի և լաբորատոր միջավայրի անվտանգության ապահովման հետ կապված խնդիրները։ Անվտանգության կանոնների անտեսումը կարող է հանգեցնել կենսաբանորեն վտանգավոր նյութերի (պաթոգենների) արտահոսքի դեպի շրջակա միջավայր՝ առաջացնելով կենսաբանական աղետներ։ Այսպիսի դեպքեր արդեն իսկ արձանագրվել են տարբեր երկրներում։ Պաթոգենների հետ աշխատանքի համար նախատեսված լաբորատորիաները դասակարգվում են **կենսաբանական անվտանգության մակարդակներով (BSL)**։ Բարձրագույն՝ **BSL-4** մակարդակը նախատեսված է առավել վտանգավոր նյութերի հետ աշխատանքի համար։ Աշխարհում նման լաբորատորիաների թիվը, նույնիսկ ամենաօպտիմիստական հաշվարկներով, չի գերազանցում երկու տասնյակը (Холопова, Е. Н., & Масальская, В. О. 2020, p. 112–122)։

Ռուսաստանի Դաշնության համար մտահոգիչ է այն հանգամանքը, որ մի շարք կենսալաբորատորիաներ, որտեղ ենթադրաբար կարող են իրականացվել գաղտնի փորձարկումներ, այդ թվում՝ Պենտագոնի հովանու ներքո, տեղակայված են իր սահմանների մոտ՝ **Վրաստանում, Հայաստանում, Ուկրաինայում և այլուր**։ Ըստ ռուսական կողմի, այս պահին Ռուսաստանի Դաշնության սահմաններին մոտ գործում են տասնյակ կենսալաբորատորիաներ, որոնք վերահսկվում են ԱՄՆ Պաշտպանության նախարարության կողմից, աշխատում են փակ ռեժիմով և ամբողջությամբ դուրս են այն պետությունների իրավազորությունից, որոնց

տարածքում դրանք տեղակայված են։ Կովկասյան տարածաշրջանում ԱՄՆ Պաշտպանության նախարարության վերահսկողության տակ գտնվող կենսալաբորատորիաների տեղակայումը պայմանավորված է տարածաշրջանի ռազմավարական աշխարհագրությամբ՝ հյուսիսից սահմանակից են Ռուսաստանին, հարավից՝ Իրանին (Филонов, В. В., Щеренко, В. В., Попов, Ю. Е., & Терещатов, В. Э. 2022, p. 258-270)։ Ըստ էության, այս կենսալաբորատորինաերի նախապատմությունը սկսվում է 1991թ-ին, երբ Ամերիկացի սենատոր Ռիչարդ Լուգարի նախաձեռնությամբ նախկին ԽՍՀՄ տարածքում մեկնարկեց «Սպառնալիքների համագործակցային նվազեցման» ծրագիրը (Cooperative Threat Reduction, CTR), որի նպատակն էր կանխել զանգվածային ոչնչացման զենքերի՝ ներառյալ կենսաբանական զենքերի և դրանց բաղադրիչների տարածումը նախկին ԽՍՀՄ տարածքում և աշխարհում։ Ծրագրի նպատակների մեջ էին մտնում նաև կենսալաբորատորիաներում անվտանգության մակարդակի բարձրացումը և վտանգավոր հարուցիչների պահպանման, վերահսկողության և հաշվառման ստանդարտների ներդրումը։ CTR ծրագիրը վերահսկվում էր ԱՄՆ Պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող Ռազմական սպառնալիքների նվազեցման գործակալության (DTRA) կողմից։ Ծրագիրը իրականացվում է ամերիկյան բարձրակարգ ռազմաբժշկական գիտահետազոտական կենտրոնների օժանդակությամբ, որոնք զբաղվում են առավել վտանգավոր պաթոգենների՝ (BSL-3/BSL-4) հետազոտություններով։ Ներկայումս, հետխորհրդային տարածքում այս ծրագրի հիմնական գործընկերներն են հանդիսանում Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Մոլդովան և Ուկրաինան (Cook, M., & Woolf, A. 2002, p. 8–13)։ Ռուսական կողմը պնդում է, տարածաշրջանում ԱՄՆ ֆինանսավորմամբ գործող կենսալաբորատորիաները սպառնում են ՌԴ ազգային անվտանգությանը, քանի որ դրանք ԱՄՆ-ին հնարավորություն են տալիս հավաքել տեղեկություններ Ռուսաստանի տարածքում տարածված էնդեմիկ պաթոգենների մասին, գնահատել դրանց տարածման ուղիները և դիմակայության մեխանիզմները և օգտագործել այդ տեղեկությունները նոր սերնդի կենսաբանական զենքի ստեղծման համար և արդյունքում իրականացնել կենսաբանական դիվերսիաներ՝ Ռուսաստանի զինված ուժերին և տնտեսությանը վնաս պատճառելու նպատակով։

Ի հակադրություն ռուսական կողմի դիրքորոշման, 2018 թվականին ԱՄՆ-ում լույս տեսավ «Կենսաանվտանգությունը Պուտինի Ռուսաստանում» (Biosecurity in Putin's Russia) գիրքը, որի նկատմամբ ակնհայտ հետաքրքրություն ցուցաբերեցին ամերիկյան առաջատար հրատարակությունները, իսկ The Washington Post-ը հրապարակեց գրքի մասին ծավալուն ակնարկ: Գիրքը իրենից ներկայացնում էր յուրօրինակ փորձագիտական զեկույց՝ ժամանակակից Ռուսաստանում կենսաբանական զենքի նոր տեսակների մշակման և կենսանվտանգության հետ կապված իրավիճակի վերաբերյալ: Գրքի հեղինակները Ռուսաստանին մեղադրում էին ապօրինի կենսաբանական զենքի ծրագրերի վերագործարկման և արդիականացման մեջ: Ըստ նրանց՝ Ռուսաստանում գործում են բազմաթիվ մասնագիտացված գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք իրականացնում են երկակի նշանակության կենսաբանական հետազոտություններ: Միևնույն ժամանակ, ըստ այդ հրապարակման, Ռուսաստանի կառավարությունը վարում է տեղեկատվական քարոզչություն՝ ուղղված այն մտքի տարածմանը, թե իբր Միացյալ Նահանգներն է խախտում կենսաբանական զենքի մշակման, արտադրության և պահեստավորման արգելման ու դրանց ոչնչացման մասին կոնվենցիայի դրույթները: Ի պատասխան՝ ամերիկյան Պետդեպարտամենտի տարեկան զեկույցներում արտահայտվել է նույն անհանգստությունը՝ սակայն արդեն Ռուսաստանի հասցեին (Zilinskas, R., & Mauger, P. 2018, p.385): Ըստ ռուսական կողմի, Հայաստանում ԱՄՆ-ի կենսաբանական ծրագրերի մասին տվյալները համեմատաբար սակավաթիվ են բաց աղբյուրներում: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ը ակտիվ ջանքեր է գործադրում Հայաստանը ներգրավելու կենսանվտանգության ոլորտում համագործակցության ծրագրերի մեջ: Մասնավորապես, 2010 թ. օգոստոսի 26-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և ԱՄՆ պաշտպանության նախարարության միջև կենսաբանական սպառնալիքների կանխարգելման նպատակով համագործակցության վերաբերյալ համաձայնագրի ստորագրմանը: Համաձայնագիրն ընդգրկում է վարակիչ հիվանդությունների մոնիթորինգի էլեկտրոնային համակարգերի ներդրումը, լաբորատորիաների արդիականացումը, «կենսանվտանգության» ամերիկյան ստանդարտների ներմուծումը և այլն: Ըստ ռուսական աղբյուրների Հայաստանում կառուցվել կամ

արդիականացվել է 12 կենսաբանական լաբորատորիա, որոնք փաստացի գործում են ԱՄՆ Պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող Ռազմական սպառնալիքների նվազեցման գործակալության (DTRA) վերահսկողության ներքո։

Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության մտահոգությունները ի վերջո հանգեցրին նրան, որ երկար բանակցություններից հետո Հայաստանն ու Ռուսաստանը 2021-ի մայիսին վերջապես ստորագրեցին կենսաբանական անվտանգության ապահովման վերաբերյալ միջկառավարական հուշագիր, ինչը ենթադրում է ամերիկյան ֆինասավորմամբ ՀՀ-ում գործող կենսալաբորատորիաներ ՌԴ մասնագետների մուտքի հնարավորություն։ Հուշագրով նաև արձանագրվեց, որ երկու պետությունների տարածքները չեն տրամադրվելու կենսանվտանգության ոլորտում միմյանց հետաքրքրությունների դեմ ուղղված գործունեության իրականացման նպատակներով երրորդ երկրների կողմից օգտագործման համար։

Ըստ էության, ԱՄՆ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի հանդեպ Ռուսաստանի բարձր զգայունությունը հանգեցնում է նրան, որ հանրային առողջապահական ենթակառուցվածքները դիտարկվում են որպես անվտանգության սպառնալիք, ինչը ստեղծում է քաղաքական ճնշման նոր ռիսկեր։ Ըստ էության, Հայաստանը, որպես փոքր պետություն, դառնում է գերտերությունների կենսաքաղաքական մրցակցության ազդեցության դաշտ, երբ կենսալաբորատորիաների գործունեությունը ներկայացվում է ոչ թե առողջապահական կամ գիտական, այլ աշխարհաքաղաքական համատեքստում։ Այս պայմաններում Հայաստանի կենսանվտանգային քաղաքականության արդյունավետությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով։ Նախ և առաջ անհրաժեշտ է ապահովել իրավական և ինստիտուցիոնալ թափանցիկություն։ Մասնավորապես, Հայաստանը կարող է նվազեցնել քաղաքական ճնշման ռիսկերը՝ ապահովելով կենսալաբորատորիաների գործունեության ամբողջական համապատասխանությունը ազգային օրենսդրության, ինչպես նաև Կենսաբանական զենքի արգելման կոնվենցիայի ու ԱՀԿ միջազգային առողջապահական կանոնների պահանջներին, ինչպես նաև ձևավորելով անկախ վերահսկողության մեխանիզմներ։ Թափանցիկությունը թույլ կտա տեղափոխել խնդիրը քաղաքական դաշտից դեպի մասնագիտական հարթություն։ Հաջորդ կարևոր հանգամանքը կենսանվտանգության

ոլորտում բազմավեկտոր համագործակցության մոդելի կիարռումն է։ Հայաստանը պետք է վարի կոմպլեմենտար քաղաքականություն և դառնա բաց հարթակ կենսանվտանգության ոլորտում գործընկեր երկրների, այդ թվում Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցության համար՝ առանց որևէ երկրի քաղաքական գերակայության։ Այսինքն, Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտում ԱՄՆ ներգրավվածությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա ոլորտում ՌԴ-ի հետ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով (օրինակ ՀԱՊԿ անդամ պետությունների կենսանվտանգության հարցերով լիազոր մարմինների համակարգող խորհուրդի շրջանակներում) համագործակցության համար։ Կարևոր սկզբունք է նաև կենսանվտանգության ապահովման ոլորտում ապաքաղաքական հռետորաբանության կիրառումը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենսաբանական սպառնալիքների նարատիվը շատ հեշտ է ենթարկել քաղաքական շահարկման, կարծում ենք Հայաստանի պաշտոնական հռետորաբանությունը պետք է ընդգծի բացառապես հարցի հանրային առողջապահական և գիտատեխնիկական ասպեկտները՝ զերծ մնալով քաղաքական մեկնաբանություններից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ՝

1. Ռուսաստանի Դաշնության նորմատիվ–իրավական բազան կենսանվտանգության ոլորտում ներկայումս բավարար մակարդակի վրա չէ և չի ապահովում ոլորտի համալիր կարգավորումը։ Եթե արդեն հայտնի և ուսումնասիրված կենսաբանական սպառնալիքների պարագայում առկա իրավական ակտերի գործնական կիրառման հնարավորությունը տեսանելի է, ապա նոր սպառնալիքների դեպքում դրանք կարող են կորցնել իրենց արդյունավետությունը՝ չունենալով հստակ կարգավորումներ և արձագանքման մեխանիզմներ։
2. Կենսանվտանգության ապահովման ոլորտում միջազգային համագործակցության առումով Ռուսաստանի Դաշնությունը փորձում է գլոբալ ինտեգրման բացը լրացնել տարածաշրջանային ինտեգրման մեխանիզմներով,

սակայն նման մոտեցումը կարող է անարդյունավետ լինել՝ հաշվի առնելով կենսաբանական սպառնալիքների բնույթը և առանձնահատկությունները։

3. Կենսանվտանգության ապահովման ոլորտում ՀՀ պետական քաղաքականությունը պետք է հիմնվի ոչ թե որևէ գերտերության հետ միակողմանի փոխգործակցության, այլ ինքնիշխանության ինստիտուցիոնալ ամրապնդման, միջազգային ստանդարտների պահպանման և բազմակողմ համագործակցության զարգացման վրա։ Այս մոտեցումը թույլ կտա նվազեցնել մեծ տերությունների միջև մրցակցության ազդեցությունը երկրի կենսանվտանգային համակարգի վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Авакьян, С. А. (2021). Конституционное право России. Учебный курс: учебное пособие: в 2 т. (7-е изд., перераб. и доп.). Москва: Норма: ИНФРА-М. https://znanium.ru/read?id=471406

Голуб, К. Ю. (2024). Проблемы и перспективы становления механизмов обеспечения биологической безопасности в формате Организации Договора о коллективной безопасности. Вестник Московского государственного лингвистического университета *(Problems and prospects for the development of mechanisms for ensuring biological security in the format of the Collective Security Treaty Organization).* Общественные науки, (1(854)), 9–15. file:///C:/Users/User/Downloads/296897-673579-1-PB%20(1).pdf

Завриев, С. К. (2022). Современные проблемы биобезопасности и перспективы международного сотрудничества. Мировая экономика и международные отношения, 66(4), 94–100. https://doi.org/10.20542/0131-2227-2022-66-4-94-100

Захаров, Т. В. (2024). Предпосылки и условия сотрудничества государств в сфере биологической безопасности. Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 4, Государство и право: Реферативный журнал, 2, 26–36. https://doi.org/10.31249/iajpravo/2024.02.02

Редникова, Т. В. (2023). Правовое обеспечение биологической безопасности в контексте национальной безопасности страны: новые угрозы и меры противодействия.

Юридические исследования, (2), 1–10. https://doi.org/10.25136/2409-7136.2023.2.39687

Указ Президента РФ от 2 июля 2021 г. № 400 «О Стратегии национальной безопасности Российской Федерации». https://base.garant.ru/401425792/

Указ Президента РФ от 11 марта 2019 г. № 97 «Об Основах государственной политики Российской Федерации в области обеспечения химической и биологической безопасности на период до 2025 года и дальнейшую перспективу» (в ред. от 24 января 2025 г.). https://base.garant.ru/72192478/

Федеральный закон от 30 декабря 2020 г. № 492-ФЗ «О биологической безопасности в Российской Федерации» (в ред. от 23 июля 2025 г.). https://base.garant.ru/400156868/

Феоктистов, А. В., & Скворцова, Е. Н. (2020). Тенденции развития законодательства в сфере охраны здоровья и оказания медицинской помощи. Наука. Общество. Государство, 8(3(31)), 99–107. https://doi.org/10.21685/2307-9525-2020-8-3-12

Филонов, В. В., Щеренко, В. В., Попов, Ю. Е., & Терещатов, В. Э. (2022). Биологические лаборатории в Кавказском регионе как источники угроз национальной безопасности России. Вестник войск РХБ защиты, 6(3), 258–270. https://doi.org/10.35825/2587-5728-2022-6-3-258-270

Холопова, Е. Н., & Масальская, В. О. (2020). Биологическое оружие как угроза национальной безопасности России. Правовое государство: теория и практика, (2(60)), 112–122. https://doi.org/10.33184/pravgos-2020.2.10

Albert, C., Baez, A., & Rutland, J. (2021). Human security as biosecurity: Reconceptualizing national security threats in the time of COVID-19. Politics and the Life Sciences, 40(1), 83–105. https://doi.org/10.1017/pls.2021.1

Cook, M., & Woolf, A. (2002). Preventing proliferation of biological weapons: U.S. assistance to the former Soviet States. Issue Brief for Congress. Washington, D.C.: Congressional Research Service. https://apps.dtic.mil/sti/tr/pdf/ADA454722.pdf

Rinaldi, L. (2024). Socio-political impacts of COVID-19–future challenges. Accounting Forum, 48(3), 455–456. https://doi.org/10.1080/01559982.2024.2369959

Zilinskas, R., & Mauger, P. (2018). Biosecurity in Putin's Russia. Lynne Rienner Publishers. https://www.rienner.com/uploads/5a32ffbd8e180.pdf

REFERENCE LIST

Avakyan, S. A. (2021). Konstitutsionnoe pravo Rossii *(Constitutional Law of Russia)*. Uchebnyi kurs: uchebnoe posobie: v 2 t. (7-e izd., pererab. i dop.). Moskva: Norma: INFRA-M. https://znanium.ru/read?id=471406

Golub, K. Yu. (2024). Problemy i perspektivy stanovleniya mekhanizmov obespecheniya biologicheskoi bezopasnosti v formate Organizatsii Dogovora o kollektivnoi bezopasnosti *(Problems and prospects for the development of mechanisms for ensuring biological security in the format of the Collective Security Treaty Organization).* Vestnik Moskovskogo gosudarstvennogo lingvisticheskogo universiteta. Obshchestvennye nauki, (1(854)), 9–15. file:///C:/Users/User/Downloads/296897-673579-1-PB%20(1).pdf

Zavriyev, S. K. (2022). Sovremennye problemy biobezopasnosti i perspektivy mezhdunarodnogo sotrudnichestva. Mirovaya ekonomika i mezhdunarodnye otnosheniya *(Modern biosecurity issues and prospects for international cooperation)*, 66(4), 94–100. https://doi.org/10.20542/0131-2227-2022-66-4-94-100

Zakharov, T. V. (2024). Predposylki i usloviya sotrudnichestva gosudarstv v sfere biologicheskoi bezopasnosti *(Prerequisites and conditions for cooperation between states in the field of biological safety)*, Sotsialnye i gumanitarnye nauki. Otechestvennaya i zarubezhnaya literatura. Ser. 4, Gosudarstvo i pravo: Referativnyi zhurnal, 2, 26–36. https://doi.org/10.31249/iajpravo/2024.02.02

Rednikova, T. V. (2023). Pravovoe obespechenie biologicheskoi bezopasnosti v kontekste natsionalnoi bezopasnosti strany: novye ugrozy i mery protivodeistviya *(Legal support for biological security in the context of the country's national security: new threats and countermeasures).* Yuridicheskie issledovaniya, (2), 1–10. https://doi.org/10.25136/2409-7136.2023.2.39687

Ukaz Prezidenta RF ot 2 iyulya 2021 g. No 400 «O Strategii natsionalnoi bezopasnosti Rossiiskoi Federatsii» *(On the National Security Strategy of the Russian Federation)*. https://base.garant.ru/401425792/

Ukaz Prezidenta RF ot 11 marta 2019 g. No 97 «Ob Osnovakh gosudarstvennoi politiki Rossiiskoi Federatsii v oblasti obespecheniya khimicheskoi i biologicheskoi bezopasnosti na period do 2025 goda i dalneysheyu perspektivu» *(On the Fundamentals of the State Policy of the Russian Federation in the Field of Ensuring Chemical and Biological Safety for the Period up to 2025 and Beyond)*, (v red. ot 24 yanvarya 2025 g.). https://base.garant.ru/72192478/

Federalnyi zakon ot 30 dekabrya 2020 g. No 492-FZ «O biologicheskoi bezopasnosti v Rossiiskoi Federatsii» *(On biological safety in the Russian Federation)*, (v red. ot 23 iyulya 2025 g.). https://base.garant.ru/400156868/

Feoktistov, A. V., & Skvortsova, E. N. (2020). Tendentsii razvitiya zakonodatelstva v sfere okhrany zdorovya i okazaniya meditsinskoi pomoshchi *(Trends in the development of legislation in the field of health protection and medical care)*. Nauka. Obshchestvo. Gosudarstvo, 8(3(31)), 99–107. https://doi.org/10.21685/2307-9525-2020-8-3-12

Filonov, V. V., Shcherenko, V. V., Popov, Yu. E., & Tereshchatov, V. E. (2022). Biologicheskie laboratorii v Kavkazskom regione kak istochniki ugroz natsionalnoi bezopasnosti Rossii *(Biological laboratories in the Caucasus region as sources of threats to Russia's national security)*. Vestnik voisk RKhB zashchity, 6(3), 258–270. https://doi.org/10.35825/2587-5728-2022-6-3-258-270

Kholopova, E. N., & Masalskaya, V. O. (2020). Biologicheskoe oruzhie kak ugroza natsionalnoi bezopasnosti Rossii. Pravovoe gosudarstvo: teoriya i praktika *(Biological weapons as a threat to Russia's national security)*. (2(60)), 112–122. https://doi.org/10.33184/pravgos-2020.2.10

Albert, C., Baez, A., & Rutland, J. (2021). Human security as biosecurity: Reconceptualizing national security threats in the time of COVID-19. Politics and the Life Sciences, 40(1), 83–105. https://doi.org/10.1017/pls.2021.1

Cook, M., & Woolf, A. (2002). Preventing proliferation of biological weapons: U.S. assistance to the former Soviet States. Issue Brief for Congress. Washington, D.C.: Congressional Research Service. https://apps.dtic.mil/sti/tr/pdf/ADA454722.pdf

Rinaldi, L. (2024). Socio-political impacts of COVID-19–future challenges. Accounting Forum, 48(3), 455–456. https://doi.org/10.1080/01559982.2024.2369959

Zilinskas, R., & Mauger, P. (2018). Biosecurity in Putin's Russia. Lynne Rienner Publishers. https://www.rienner.com/uploads/5a32ffbd8e180.pdf

РЕЗЮМЕ

ПРАВОВЫЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ОСНОВЫ СИСТЕМЫ БИОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ И ИХ ВЛИЯНИЕ НА СРЕДУ ОБЕСПЕЧЕНИЯ БИОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Баграт Варданян

Статья посвящена системному исследованию правовых и политических механизмов обеспечения биологической безопасности в Российской Федерации с акцентом на законодательные основы данной сферы, рамки международного сотрудничества, а также на политико-правовые и военно-политические дискуссии вокруг финансируемых Соединёнными Штатами Америки биологических лабораторий и их влияние на биобезопасностную среду Республики Армения. После пандемии COVID-19 академические дискуссии о биологических угрозах и необходимости их предотвращения получили новый импульс, что предопределило актуальность и научную значимость настоящего исследования. Целью статьи является выявление правовых и политических проблем в сфере обеспечения биологической безопасности в Российской Федерации и оценка их влияния на биобезопасностную среду Республики Армения. Для достижения поставленной цели в работе предпринята комплексная оценка нормативно-правовой базы, регулирующей сферу биологической безопасности в Российской Федерации, а также анализ стратегических направлений международного и регионального сотрудничества и политических вызовов в области обеспечения биологической безопасности. Исследование основано на анализе существующих в научной литературе подходов и концепций. В работе применены методы системного

анализа, сопоставления, индукции и дедукции. В статье обосновывается, что законодательная и управленческая система обеспечения биологической безопасности в Российской Федерации в настоящее время не соответствует требованиям комплексного регулирования данной сферы. Одновременно аргументируется, что залогом устойчивой и эффективной политики Республики Армения в области биологической безопасности является прозрачное и многовекторное международное сотрудничество.

Ключевые слова: *биологическая безопасность, национальная безопасность, международное сотрудничество, Конвенция о запрещении биологического оружия, биологическая лаборатория.*

SUMMARY

THE LEGAL AND POLITICAL FOUNDATIONS OF THE BIOSECURITY SYSTEM OF THE RUSSIAN FEDERATION AND THEIR IMPACT ON THE BIOSECURITY ENVIRONMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Bagrat Vardanyan

This article examines the legal and political mechanisms of biological security in the Russian Federation through a systemic approach, highlighting the legislative foundations of the field, the frameworks of international cooperation, as well as the political and security debates surrounding U.S.-funded biological laboratories and their implications for Armenia's biosecurity environment. Following the COVID-19 pandemic, academic discussions on biological threats and the necessity of their prevention have intensified, which determines the relevance and scientific significance of this study. The purpose of the article is to identify the legal and political challenges of ensuring biosecurity in the Russian Federation and to assess their impact on the biosecurity environment of the Republic of Armenia. To achieve this objective, the study undertakes a comprehensive analysis of the regulatory and legal framework governing biosecurity in the Russian Federation, as well as an evaluation of its strategic directions in international and regional cooperation and the political challenges in the field of biosecurity assurance. The issues discussed in the article are examined on the basis of an analysis of viewpoints presented in the relevant scholarly literature. The methods of systemic analysis, comparison, induction, and deduction are applied. The article substantiates

that the legislative and administrative system of biosecurity assurance in the Russian Federation is currently insufficient and does not ensure comprehensive regulation of the field. At the same time, it is argued that transparency and multi-vector cooperation constitute a key guarantee of a sustainable and effective biosecurity policy in the Republic of Armenia.

Keywords: *biosecurity, national security, international cooperation, Biological Weapons Convention, biological laboratory.*

Հոդվածը ստացվել է՝ 05.10. 2025
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 09.10. 2025
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 24.11.2025